



ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

30.06.2021թ.

**2021թ. ՀՈՒՆԻՍԻ 23-25-Ը ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ
 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳԻՐՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
 69-ՐԴ ԼԻԱԿԱԶՄ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ
 (ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ՝ ք. ԺՆԱ)**

ՄԱԿ-ի Եվրապայի տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ ԵՏՀ) ձևավորվել է 1947թ. ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից: Այն Միավորված ազգերի կազմակերպության հինգ տարածաշրջանային հանձնաժողովներից մեկն է:

ՄԱԿ ԵՏՀ-ի հիմնական նպատակն է՝ խթանել համաեվրոպական տնտեսական ինտեգրումը: Այն ներառում է 56 անդամ-պետություններ Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում և Ասիայում: Սակայն ՄԱԿ-ի բոլոր շահագրգիռ անդամ-պետությունները կարող են մասնակցել ՄԱԿ ԵՏՀ-ի աշխատանքներին:

Ավելի քան 70 միջազգային պրոֆեսիոնալ կազմակերպություններ և այլ ՀԿ-ներ մասնակցում են ՄԱԿ ԵՏՀ-ի աշխատանքներին: Ավելի քան 60 երկրներ մասնակցում են Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսին (ԵՎԿ)՝ խթանելու վիճակագրական աշխատանքները ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում և դրա սահմաններից դուրս:

Կոնֆերանսը՝

- ապավինում է Բյուրոյի տեսլականին և խորհրդին, որը կառավարում է ողջ ԵՎԿ աշխատանքը,
- հաստատում է փորձագետների ցանցի կողմից մշակված ուղեցույցներ, առաջարկություններ և ստանդարտներ,
- գնահատում է լավ փորձառություններն ու վերանայում է վիճակագրության ի հայտ եկող խնդիրները:



ԵՎԿ **Բյուրոն** տրամադրում է Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի տեսլականն ու ուղղորդումը: Այն ԵՎԿ անդամներից ընտրված 9 առաջատար Գլխավոր վիճակագիրների խումբ է (Բյուրոյի նախագահ՝ Իռլանդիա, փոխնախագահներ՝ Հայաստան, Կանադա, Մեքսիկա, Նոր Զելանդիա, Լեհաստան, Սերբիա, Միացյալ Թագավորություն, Լատվիա): Ներկայացված են նաև 7 հիմնական միջազգային կազմակերպություններ՝ ի դեմս ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի նախագահի, Եվրոստատի գլխավոր տնօրենի, ԱՄՀ-ի վիճակագրության վարչության տնօրենի, ՏՀԶԿ-ի վիճակագրության և տվյալների տնօրինության գլխավոր գործադիր վիճակագրի և գործադիր տնօրենի, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի տնօրենի, ՀԲ-ի Տվյալների զարգացման խմբի տնօրենի, ՄԱԿ-ի ԵՏՀ-ի վիճակագրության բաժնի տնօրենի և ԵՎԿ քարտուղարի:

Առաքելությունն է՝

- խթանել նորարարությունը՝ օրինակ, ուսումնասիրելով բացերն ու ի հայտ եկող խնդիրները,
- ստեղծել փորձագետների ցանցեր և ուղղորդել դրանց աշխատանքն ի հայտ եկող վիճակագրական խնդիրներում,
- տրամադրել խորհրդատվություն ՄԱԿ ԵՏՀ-ի Քարտուղարությանը բոլոր վիճակագրական աշխատանքների վերաբերյալ,
- ընտրել թեմաներ Կոնֆերանսի ամենամյա հանդիպումների և հետագա աշխատանքի համար:

Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 69-րդ լիակազմ նստաշրջանը տեղի է ունեցել 2021 թ. հունիսի 23-25-ը՝ հեռավար եղանակով:

Նստաշրջանին հեռավար եղանակով միացել են շուրջ 200 մասնակիցներ: Հայաստանից մասնակցել են ԱՐՄՍՍՍՍ-ի նախագահ Ստեփան Մնացականյանը (ով նաև Բյուրոյի փոխնախագահներից է) և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Անահիտ Սաֆյանը:

2021թ. հունիսի 25-ի լիագումար նիստում ԱՐՄՍՍՍՍ-ի նախագահ Ստեփան Մնացականյանը 4-րդ անգամ՝ 2 տարի ժամկետով, վերընտրվեց որպես Բյուրոյի փոխնախագահ:

ՀՀ վիճակագրության պետական խորհուրդ

Պարզաբանումների համար տեղեկատու՝

Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին՝ ☎ (011) 523 356

Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին՝ ☎ (011) 589 545